ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի առաջատար խորհրդատուն՝

1. Իրականացնում է Արդարադատության նախարարի և ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հրամանների համաձայն կատարողական վարույթներով ընթացիկ գործունեության տեսչական ստուգում և ծառայողական քննությունների անցկացում,
2. Իրականացնում է կատարողական գործողությունների ընթացքում տարածքային բաժինների կողմից ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ներկայացված զեկուցագրերի կամ Բաժին ներկայացված գրությունների հիմքով որոշակի կատարողական վարույթների ուսումնասիրությունը,
3. Իրականացնում է քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, պետական մարմիններից ստացված դիմում-բողոքների և այլ գրությունների պատասխան գրությունների պատրաստումը,
4. Ապահովում է Ծառայության աշխատակիցների կողմից իրականացվող կատարողական գործողությունների օրինականության նկատմամբ հսկողության գործընթացը,
5. Մասնակցում է միատեսակ իրավակիրառ պրակտիկայի մեթոդաբանության մշակմանը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան,
6. Կատարում է բաժնի կանոնադրությամբ սահմանված և Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ.

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարման ծառայության տեսչական և վերլուծական բաժնի առաջատար խորհրդատուի պաշտոնում նշանակվելու համար աշխատանքային ստաժ և աշխատանքի բնագավառում փորձ չի պահանջվում:

Պաշտոնին նշանակվելու համար մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի N 461-Ն որոշմամբ: